

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիային խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յարտադրութիւնը ընդունւում է ամեն լեզուով.

Յարտադրութիւնների համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՀԱՄԱՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Մեռած սկզբները.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Զարթիկ արձատր. Նամակ Պետերբուրգից. Նա-
մակ Բաղդադից. Նամակ Խմբագրութեան. Ներ-
քին լուրերը.—ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ
Խաղաղից. Արտաքին լուրեր.—ՀՅՈՒԱԳՐՈՒՆԵՐ.
—ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱՆ. Ելի
մի նոր գիրք. Գիւղական հաբիւններ.

ՄԵՌԱՆ ՍԿԶՐՈՒՆՔ

Անգլիայի և Տրանսկապի մէջ պատե-
րազմը անխուսափելի է դարձել. Բոլոր
նշանները ցոյց են տալիս, որ աշխարհի
ամենամեծ պետութիւններից մէկը պիտի
յարձակվի մի բուռն երկրագործ ժողովուր-
դի վրա, որ այսօր մի ձեռքում հրացան
և միւս ձեռքում Աստուածաշունչ բռնած
պատրաստ է մեռնել իր պատմութիւնը
պահպանելու համար: Այդ ժողովուրդը
մեղք չունի ծովերի հպարտ թաղուհու
առաջ. և ահա այդ պատճառով պատ-
րաստով պատերազմը ոչ մի համակրանք
չէ գտնում քաղաքակրթ աշխարհի մէջ
և այն բոլոր ազգերը, որոնք գիտեն մե-
ծարեւ ազատութիւնը, սաստիկ բողոքներ
են արձակում Անգլիայի դէմ: Իսկ ինքը,
Անգլիան, այս րօպէին մի տարօրինակ տե-
սարան է ներկայացնում Նրկիրը սովոր է
ուժեղ հասարակական կարծիք առաջ բե-
րել ամեն մի դէպքում, նոյն իսկ այնպիսի
հարցերի վերաբերմամբ, որոնք մեծ Բրի-
տանիայի շահերը չեն շոշափում: Աշխար-
հը այդպէս է սովորել տեսնել Անգլիան:
Բայց այժմ, երբ այնքան սուր կերպարանք
է ստացել արանսկապեան հարցը, երբ
վաղը, միւս օրը Անգլիան կարող է նետ-
վել անարդար պատերազմի դաշտը, հա-
սարակական կարծիքը ոչ մի արտայայ-
տութիւն չէ ցոյց տալիս, եթէ չը հաշ-
ւենք այն խայտառակ միտքերը, որի մա-
սին խօսեցինք մի քանի ժամանակ առաջ:
Ասում են, որ անձնաւորութիւնները
պատմութեան մէջ շատ չնչին դեր են
կատարում: Բայց և այդպէս այժմեան
Անգլիայում, ինչպէս և ամեն տեղ, նը-
կատվում է ուժեղ և մեծ անձնաւորու-
թիւնների պակասութիւնը: Լրագիրները
հաղորդում են, որ անգլիական ազատա-
միտները գիւղական լօրդ Բոգերին, խնդ-

րելով բողոք յայտարարել Տրանսկապի պա-
տերազմի դէմ, բայց ազնիւ լօրդը, որ եր-
կու տարի առաջ ազատամիտ կուսակցու-
թեան պաշտօնական պարագլուխն էր,
մերժեց այդ առաջարկութիւնը, քանի որ
ինքն էլ համակրում է այժմեան պահպա-
նողական միտքերի թաղուհու բռնած ուղղու-
թեան: Ազատամիտ կուսակցութեան այժ-
մեան պաշտօնական պարագլուխ Աննէր-
Բաններման միայն անուշով է պարագլուխ
և ոչինչ գործունէութիւն չէ ցոյց տալիս:
Սե ալպէս, ազատամիտ կուսակցութիւնը
կեանքի նշոյններ չէ ցոյց տալիս մի այն-
պիսի ժամանակ, երբ կոպիտ ոյժը պատ-
րաստվում է արեւնհեղութիւններով տօ-
նել իր իրաւունքը:

Բայց ազատամիտ կուսակցութիւնը ու-
նի մի անցեալ, որ բոլորովին ուրիշ հոգի
էր ներկայացնում: Գանի որ կենդանի էր
«մեծ ծերունին», քանի որ նա իր ջղուտ
ձեռքերում էր պահում կուսակցութեան
դէպքը, ազատամիտները իւրաքանչիւր ա-
նարկարութեան դէպքում հրապարակ էին
գալիս համախմբած, միապաղաղ շարքե-
րով և բողոքում էին հասարակական կար-
ծիք էին պատրաստում: Ով հետեւել է
անգլիական երկու կուսակցութիւնների
պատմութեան, նրա համար պարզ կը լի-
նի, որ XIX դարում պահպանողական կու-
սակցութիւնը նշանաւոր բարեփոխումներ
չը մտցրեց իր դաւանանքներին, իր ծրա-
գիրներին մէջ. մինչև այժմ էլ նա իմպե-
րիալիզմի սիրահար է, աշխատում է ար-
տաքին աշխուժութիւններով ամրացնել իր
գիրքը: Ազատամիտ կուսակցութիւնը ա-
ւելի արդիւնաւոր գործունէութիւն ցոյց
տուեց ներքին գործերի մէջ, և մի շարք
գեղեցիկ ընթերցանքներ, որ Անգլիան ստա-
ցաւ ներկայ դարի ընթացքում, այդ կու-
սակցութեան ջանքերի արդիւնքն էին:
Բայց ազատամիտ կուսակցութիւնն էլ
խորթ էր արտաքին տրեւանդանդական
քաղաքականութեան և ունի իր պատմու-
թեան մէջ Նրկմի պատերազմը: Բայց
Վլադստոնի ղեկավարութեամբ այդ կու-
սակցութիւնը տասնեակ տարիներ ըն-
թացքում բարեփոխեց իր ուղղութիւնը,
հանդիսացաւ ռիսիւթի թշնամի ամեն մի
անօգուտ, ապարդիւն բռնութեան, պա-
տերազմների, մանաւանդ այնպիսի պա-
տերազմների, որոնք փոքր ազգութիւննե-

րի ազատութեան էին սպառնում: Ազա-
տամիտ կուսակցութիւնը մարդկային խիղ-
ձըն ու արդարութիւնն էր ներկայացնում
և յանուն այդ սկզբունքների կատարել
պայքարներ էր վարում կառավարութեան
դէմ:

1880 թվականին նոյն Տրանսկապի պա-
տերազմ էր մղում Անգլիայի դէմ, որով-
հետեւ Անգլիայի ղեկը զսնվում էր փա-
ռասեր, նուաճումների վրա սիրահարված
Բիկոնսֆիլդի ձեռքում: Բոգերները մի քանի
յաղթութիւններ տարան, անգլիացիներ-
ըն չը կարողանալով տանել մի բուռն
հողագործների ձեռքից պարտութիւն կրե-
լու միտքը, մեծ պատրաստութիւններ էին
տեսնում հարաւային Աֆրիկան պատե-
րազմական արեւնտ դաշտ դարձնելու
համար: Բայց յանկարծ Վալշտադի նա-
հանգապետը ստանում է Լոնդոնից հե-
տեւալ հեռագիրը, որ հռչակաւոր անուն
է ստացել պատմութեան մէջ. «Մենք մե-
ղաւոր ենք բռնիների առաջ. հաշտութիւն
կընցեցե՛ք»: Այդ հեռագիրը ուղարկել էր
Վլադստոնը, որ նոր էր խել Բիկոնսֆիլդի
ձեռքից կառավարութեան ղեկը: Սե այ-
նուհետեւ Անգլիայի և Տրանսկապի մէջ
կընթաց դաշնադրութիւն, որ հրատարա-
կում էր Տրանսկապի անկախութիւնը:

Այս փաստը ինքն ըստ ինքեան բաւա-
կան է ցոյց տալու, թէ ինչ էր անգլիա-
կան ազատամիտ կուսակցութիւնը առաջ
և ինչ էր այժմ: Վլադստոնի Անգլիան, չը
նայած իր ահալին ոյժին և աշխարհա-
ծաւալ հեղինակութեան, խոստովանում
էր, թէ ինքը մեղաւոր է աղքատ բռնիների
առաջ: Իսկ Վլադստոնի գործակից և յա-
ջորդ լօրդ Բոգերը հրաժարվում է նոյն
իսկ բողոքի մի թիւթը ցոյց անել, երբ
նոյն բռնիների գոյութեան հարցն է զըր-
ված հրապարակում: Գուցէ այդ հանգա-
մանը հարկաւոր է, որ պատմութիւնը
կարողանայ ցոյց տալ թէ ինչ զանազա-
նութիւն կայ Վլադստոնների և Բոգեր-
րիների մէջ. բայց դրանից ի՞նչ օգուտ
ունի ժամանակակից մարդկութիւնը, որ
անգլիական ազատամիտների ներկայ ըն-
կած ու ողորմելի դրութեան մէջ պիտի
տեսնէ միայն արդարութեան և մարդկա-
յին խելի մեծ ու ծ սկզբունքները միայն:
Այդ սկզբունքները յաղթանակը այժմ ան-
ցեալին է պատկանում. բայց մարդկու-

թիւնը ապրում է և նրա բախտաւորու-
թեան համար հարկաւոր էր, որ երկվա-
նը կրկնվի այսօր, վաղը, ամեն ժամանակ,
որքան ապրող մարդ կայ...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶԱՐԻՔԻ ԱՐՄԱՏԸ (Նամակ Ախալքալաքից)

Իւրաքանչիւր չարիքի, աղէտի առաջն առնե-
լու համար պէտք է գտնել նախ նրա արմատը,
երևան գալու գլխաւոր պատճառները և ապա
միջոցներ որոնել նրա դէմ:

Մեր գիւղերում տարածված գլխաւոր չարիք-
ներից մէկը վրա մատնացոյց էր արված «Մշակի»
№ 169-ում և միջոցներ առաջարկված նրա ա-
ռաջն առնելու համար: Իսկ միմեանց ղեկը
հրդեհելու, վաղեր կորստելու, անասուններ
մորթողութեւ վատ սովորութիւնն է: Կարգաւոր
«Մշակի» յիշեալ առաջնորդը, իբրև գիւղացի,
պարտք ենք համարում յայտնել մեր կարծիքը
մեր սրտին մօտիկ այդ կենսական խնդրի մա-
սին:

Կալոց է. գիւղացին իր ամբողջ տարվայ ա-
րիւն քրտինքի վաստակը փախցնելով աւերիչ
կարկուտի ու եղեամբի, ոչխարի հօտերի ու նա-
խիրների բերանից, հաւաքել է, դիզել իր կա-
րում և պատրաստվում է կախելու: Բայց ահա
մի մուկ գիւղեր «աւաք» է ընկնում և կրակի
ալ բոցը գիւղացու կալից խառնվում է ամպե-
րին: Աստուած մի արասցէ, եթէ մի քանի
բարձրանա՝ ամբողջ գիւղը կորած է: Փափվում
են գիւղացիները կին ու մարդ, ծեր ու տղայ և
արտասուքի հեղեղով հանգցնում հրդեհված դէ-
պը, որի մօտ, ձագը կորցրած կատաղի վագրի
պէս, մռնչում է տէրը: Բայց որ անխելոքն էր
սիրտ արել գործելու այդ չարիքը: Գիւղի սրի-
կանները, հաւիղունները: Մեր կարծիքով շատ
դէպքերում մշ. Այլ նա, որի արտերից դիզված
էր այդ դէպը, նա, որի արիւն-քրտինքի ար-
դիւնքն էր այդ, նա, որը դուցէ ինքն ըստ ին-
քեան մի անմեղ ու աղաչալի չարիքների ձեռ-
նարկելու անընդունակ մարդ է, բայց հանգա-
մանները, անել զրուկիւնը հասցրել են նրան
այդտեղ:

Մարկոսի պապը յիսուն բուրի պարտք է
վերցնում Կիրակոսից իր ընտանեկան կարիքնե-
րի համար: Ինքը՝ պարտապանը մեռնում է տո-
կոսներ վճարելով: Նրա որդին հաշմանդամ է
դառնում պարտատիրոջ դրանք և այժմ նորա-

ԲԱՆԱՍԻՐԱՆ

ԵԼԻ ՄԻ ՆՈՐ ԳԻՐԻՔ

Ինչպէս նախորդ յօդուածում յիշեցինք, պ-
Դրիօյտի աշխատութեան երրորդ մասն ամենից
շատ հետաքրքրականն է, որովհետև քննում է
արեւելեան հարցի նշանաւոր կէտերը, որոնք
դեռ անլուծելի են մնացել: Այդ կէտերը, մակե-
դոնական, կրեոական, ալբանական և ուրիշ
հարցերը լաւ ըմբռնելու համար, հեղինակը բա-
ցատրում է սուլթան Աբդուլ-Համիդի անձնա-
կան քաղաքականութիւնը, որը նա սկսեց գոր-
ծադրել իր գահակալութեան օրից նորամուտ-
ված ծրագրով—ոչ մի իրական գիշումն չանել
եւրոպական ազդեցութեան և Եւրոպայի պա-
հանչներին, sauver les apparences, արմատա-
խիլ անել բէֆօրմիների քաղաքականութիւնը և
թող փչելով Եւրոպայի աչքին, ցոյց տալով առ-
երկողնայ կողմնակից բէֆօրմիների, վերահաստա-
տել իսլամի նախկին ոյժը և սուլթանի անձնա-
կան անսահման իշխանութիւնը—ահա այդ ծրա-
գրի հիմքը:

«Եւրոպան երկար ժամանակ չը հասկացաւ
այդ նոր քաղաքականութիւնը. նա շատ ուշ նը-
կատեց, որ այլ ևս Բ. Գուռը գոյութիւն չունի,
որ սուլթանը միահեծան տէր է, և մինչստորեւ-

րի խորհրդակցութիւնները միայն իրան, Եւրո-
պային, մտընցնելու նպատակով են կատար-
վում և կառավարութեան իսկական կենտրոնը
ոչ թէ Բ. Գուռն է, այլ Սլոբոդի պալատը: Տաս-
նեակ տարիների ընթացքում Աբդուլ Համիդի
բուն կերպարանքը այդպէս կեղծված մնաց,
չըջապատված մի անթափանցելի քողով և հե-
ռուից նոյն իսկ համակրական, որովհետև պատ-
մում էին թէ, ճիշդ է, քիչ կրթութիւն է ստա-
ցել, բայց շատ սիրում է կարգաւ, անարատ
է իր վարքը ու բարքի մէջ, չարիւտը է զուարճու-
թիւնների մէջ և բոլորովին տարբեր է նախկին
ծոյլ և հեղգ սուլթաններից, որոնք թաղաւո-
րում էին միայն հարէմում և շատ վաղ կորց-
նում էին այդտեղ իրանց ֆիզիքական և բարո-
յական եռանդը:

«Զը պէտք է սակայն կարծել, որ սուլթանը
բացառիկ արժանիք և նշանաւոր քաղաքական
ունեցող մի վեհապետ է: Նա իշխանութեան է
հասել չորսիւս մի յեղափոխութեան, որ զրկեց
իր իրաւունքը: Մուրադին գահին, իսկ իր Տօրեղբօր
Աբդուլ Ազիզին—կեանքից, նա, կարծես, մնա-
ցել է ընկճված մի անշարժ խաւով ազդե-
ցութեան տակ և ենթարկված է իր չըջապա-
տողների իշխանութեան, որոնք սպառնում են
նրան գահընկէցութիւն կամ մահ, եթէ չը գոր-
ծի իրանց ցանկութեան համաձայն: Աբդուլ
մինչև որ աստիճան նա ազատ է և պատաս-
խանատու իր արձակած հրամանների համար:
Այս յայտնի է, որ կամայ կամ բռնի, Աբդուլ

Համիդը ֆանատիկոս մուսուլմանների պետն է
դարձել. նա ստանձնել է կրօնապետի վտանգա-
ւոր դերը և այդ պատճառով նա ամենամեծ
յարգանք է ցոյց տալիս չէլիբերին, ինչպէս
Աբուլ-Հուլա անունով մուլեանդ չէլիբին, որ ե-
կել է Սիրիայից և ամբողջ ճանապարհին բա-
րոյնք էր կարողում հաւատացեալների վախկո-
տութեան և խալիֆի թուլութեան դէմ: Նա մը-
տերիմ յարաբերութիւններ է պահպանում Տրի-
պօլի կրօնական ընկերակցութիւնների և մա-
նուսեղ Սենտիսականների հետ, որոնց հետ միա-
սին որոնում են համախմբութեան գաղափա-
րը և յոյս ունեն վերակազմել մուսուլման աշ-
խարհի միութիւնը Նեղոսի հովտի վրայով:

«Այդ քաղաքականութիւնը առաջ տանելու
համար միջոցներ պէտք է ունենալ, և ահա սուլ-
թանը վերակազմեց թիւրքական զօրքը և 1883-ին
պրուսացի զորապետներ հրաւիրելով, կատարե-
լագործեց օսմանեան զօրախմբերի դիւանորու-
թիւնը և կարապաշտութիւնը: Բացի կանոնաւոր
զօրքից, նա առանձնապէս աշխատեց կազմելու
«Համիդիէ» յատուկ զօրախմբը, որ սահման-
ված է կատարելու արագ և ապահով կերպով
նրա բոլոր հրամանները: Հարկաւոր է դրամ և
ահա սուլթանը կուտակում է Նլոբդ-Քոսովում մի
ամբողջ դաճ, կողոպտելով հասարակական ֆի-
նանսները, աւելացնելով հարկերը, հնարելով
նոր տուրքեր, սպառնելով կայսրութեան հողերը:
Շատ անգամ վախները ստանում են պալատից
հրաման նոր հարկեր հաւաքելու. հարկերը թէև

արդէն հաւաքված են լինում, բայց ստիպում են
նորից վճարել:

«Եւրոպան, զբաղված լինելով ուրիշ հարցերով,
Աբդուլ-Համիդի անունով տակ տեսնում էր միայն
մի տկար, քեանձոյ և տատանվող կառավա-
րութիւն, որը, թէև չէր շտապում գործադրել
խոստացած բէֆօրմիները, բայց պատկառանքով
էր վերաբերվում իր խորհուրդներին, այդ պատ-
ճառով Եւրոպան խայտալ էր նրան: Միայն
վերջին դէպքերը լուսաւորեցին Եւրոպայի միտ-
քը»:

Այս խօսքերից յետոյ հեղինակն անմիջապէս
անցնում է Հայաստանի վերջին անցքերին, նա-
խապէս նկարագրելով Հայաստանը, համառօտ
ակնարկ ձգելով հայոց եկեղեցու և թիւրքահայոց
սահմանադրութեան, Սան Ստեֆանոյի և Բերլինի
դաշնագրի ներքին վրա: Պատմութիւնը ամենքին
յայտնի է:

Յետոյ հեղինակը խօսում է Կրէտէի գործերի
և յոյն-թիւրքական կռուի մասին (1895—1897),
այսպէս անցնում է մակեդոնական խնդրին: Վեր-
ջացնելով արեւելեան հարցի շղթան կազմող մօ-
տաւոր օղակների ընդմիջումը, նա անցնում է հե-
ռուտ օղակներին և ամբողջ գլուխներ է նուե-
րում Ռուսաստանին և Անգլիայի մրցման Ասիա-
յում, խօսում է Պարսկաստանի, Աֆղանստա-
նի, Հնդկաստանի, Չինաստանի մասին. դրանից
յետոյ քննում է իսլամի վիճակը այդ երկրնե-
րում և Աֆրիկայում ու կանգ է առնում երկար
եզրկատական հարցի վրա. չէ մոռանում նաև

հաս թուր ոչ միայն ինքն է ծառայում պարտաւոր իրական աղայի մօտ, այլ և իր միակ կարողութիւնը՝ մի քանի օրավար վարելանշող յանձնել է նրա իրաւասութեանը։ Եւ ահա այն ահագին դէպքը իրական աղայի կալում դիզվել էր պարտապանի արտերից, հէնց իրանց հողանքները ձեռքով։ Տգէտ, անուս գիւղացին, ոչնչնչով չը կարողանալով հովաքներ իր դաղված սիրտը, տեսնելով իր «մանր ու խոշոր» մեքերութիւնն ու քաղցը, մի օր լուծում է իր պապերի ժառանգական վեճը, հրդեհում է իր սեփական արեւն-բորտից վատակելը, որ բաժին էր դառնել իր հոգեհանձն վաշխառուին, իսկ ինքը մօտը կանգնած՝ մի կողմից արտասուում է, միւս կողմից հրճվում, որ եթէ իր աշխատանքի պտուղը ինքը չէ վայելում, գոնէ ուրիշին էլ չէ մնում։

Մի դէպք ևս, որին ինքս ակնատես եմ եղել։ Մի տարի մեր գիւղի հովիւներից ոմանք աշխատել են, երբ ոչնչաբը տեւերն այլ ևս չեն կը թուծ, իրանք կ'իջնէին ծածուկ և մեր գիւղի խանութպաններից մէկի վրա ծախել ամենափայլուն գնով։ Բայց վաշխառու խանութպանը զլանում է այդ չնչին գինն էլ վճարելու գող հովիւներին, որոնք, ի հարկէ, չէին կարող բողբոջել ոչ մի տեղ։

Եւ ահա մի գիշեր յիշեալ խանութպանի քսան սալ խոտի դէպքը բոլոր բարձրացաւ երկինք։ Ո՛վ էր մեղաւոր։

Ուրեմն գիւղերում, մեր կարծիքով, այդ չարքն առաջ է գալիս աւելի հիմնական պատճառներից, քան մի քանի «արտաւոր» անդամների կամ «սրբական» շնորհիւ, որոնց տուած փեսաները, համեմատած «անմեղ աղաների» պատճառած չարքների հետ, ոչինչ են։

«Մշակի» յիշեալ առաջնորդը իբրև միջոց այդ չարքի առաջն առնելու, առաջարկում է ճանաչարական խղճի դատը։ Բայց կայ արդեօք մեր գիւղերում հասարակական դատ. կայ հասարակական խղճի ազատութիւն։ Հասարակական խղճը կաշկանդված է մի քանի վաշխառու-աղաների կողմ շղթաներով, հասարակական արդար դատը գերի է նւթակաւ ոյժի ձեռքին։

Մեր կարծիքով, նախ պէտք է փշրել հասարակական խղճը կաշկանդող շղթաները, նախ ապալելով այդ խղճի ազատութիւնը բռնաբարող հրէշներին, հաւասարութիւն տալ հասարակութեան ընկճված անդամներին խեղդվող ձայներին, և ապա հասարակական դատից արդարադատութիւն, խղճի օրէնք պահանջել։

Ղազարոս Տէր-Պրիգորեան

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԱՌԻԳԻՑ

Սեպտեմբերի 19-ին
Կովկասեան պանիրները համար նշանակված պարգևների մասին եւ հեռագրերի «Մշակին»։ Ամենաբարձր պարգևը՝ պատուի զիպով՝ ստացաւ այն պանրագործարանը, որ պահում են Լինհարդ և Մատթէոսեան պարտնները Բօրչա-լուի գաւառի Դարբարուղով կոչված տեղում։ Այդ գործարանի մասնակիցներից մէկը պէտք է լինի առաջիկայ 1900 թուից երկուսուսարդ մասնագէտ Արդիւնից։ Պանրագործարանը ներկայ

Հարեւոյտանը և Ֆրանսիայի կատարած դերը արեւմտեան Աֆրիկայում։

Պարսկաստանի մասին խօսելիս, համառօտ տեղեկութիւններ է տալիս բարեական աղանդի մասին, որ մեծ նուաճումներ է գործում պարսիկ ժողովրդի մէջ և, հեղինակի կարծիքով, միայն Պարսկաստանի ապագայ կրօնն է, որ կարող է նրա վերածնութեան պատճառը լինել։

Այդ բոլոր ահագին խնդիրները հեղինակը անսպասակ չէ ընդունւում, նախ՝ նրանք կապ ունեն արեւելեան մեծ հարցի հետ և, երկրորդ՝ հեղինակը փաստերով կամենում է համոզել ընթերցողներին, որ նրանք եւ յանգին այն եզրակացութեան, որին ինքն է հասել. այդ եզրակացութիւնը, որ մի ամբողջ առանձին գլուխ է կազմում, առանց որ և է կասկած թողնելու ապացուցանում է, թէ որքան անկայուն է այն քաղաքականութիւնը Քիւրբիայի վերաբերմամբ, որին հետևում է Ֆրանսիան և նրա հետ միւս պետութիւնները և որքան սխալ է այն կարծիքը, թէ Քիւրբիայում կարող են երբ և իցէ դորձարկել եւրոպական բէֆօրիսներ։ Հեղինակը չէ ուրախւում, որ օսմանեան կայսրութեան մէջ եղել է մի վերանորոգական աւանդութիւն, այդ՝ Թանդիստիկ աւանդութիւնն է, որ ունեցել է անկեղծ ներկայացուցիչների մի ամբողջ շարք—Սէլիմ III, Մահմուդ II, Աբդուլ-Մէջիդը, Ռէշիդ-փաշա, Ֆուադ-փաշա, քայց, ասում է նա, «թանդիստիկ կատարեալ աւանդութեան հանդիպեց և օսմանեան կայսրութիւնը այսօր, չը նայելով զանազան «Եւրոպիկ-Նեֆթիկներին», նոյն

1899 թուին բիշ պանիր է արդիւնաբերել, մօտ 400 պուդ։ Երկրորդ պարգևը՝ ոսկէ մեծ մեղալ՝ ստացաւ Գէորդ Շաղինեանի պանրագործարանը, որ գտնվում է Բօրչալուի գաւառի Դարբարուղի մօտ, Ուրեղից կապով վերցրած հողի վրա։ Շաղինեան նոր է թացել այդ պանրագործարանը, ներկայ 1899 թուին պատրաստել է 800 պուդի չափ պանիր, իսկ առաջիկայում պէտք է հասցնի նրա քանակութիւնը 1200—1500 պուդի։ Փոքր ոսկէ մեղալ ստացաւ Ֆեօդօր Գաւառի և Ֆեօդօր Վիրլովի պանրագործարանը, որ 1899 թուին պատրաստել է 900—1000 պուդի չափ պանիր։

Գնահատող յանձնաժողովը ամբան բարձր էր դասում կովկասեան պանիրները, որ նա զատեց նրանց Ռուսաստանի պանիրներից, կազմելով Կովկասի համար առանձին բաժին և գնահատելով այդ պանիրները անկախ հիւսիսի պանիրներից։ Ցանձնաժողովը վախճում էր, որ կովկասեան պանիրների ամենամիջակ նմուշներից մէկը կարող կը լինի աւելի բարձր գնահատութիւն տալու, քան Ռուսաստանի ներքին հանգանքի ամենալաւագին պանիրը։ Այդ դատարարը շատ ջիւղ էր վրձարարութեան առարկայ դարձաւ. կովկասեան ներկայացուցիչները առաւարկում էին, որ վաճառանոցը կամ սպառող ազգաբնակչութիւնը, երբ որ պանիրն զին են տալիս, գնահատում են նրա համը և նրա արժանաւորութիւնը և երբեք դերադատութիւն չեն տալիս այն պանիրին, որը թէլէ լաւ է, բայց գոնէ Ռուսաստանի ներքին հանգանքների արդիւնքն է. այդ պատճառով պանիրները պէտք է դասաւորել նրանց արժանաւորութեան կարգով. իսկ եթէ Ռուսաստանի ներքին հանգանքների ներկայացրած արդիւնքների մէջ առանձնապէս ներկայումս են խնամքով պատրաստութիւն, վարպետի մտով և ջանքով և ջանքով, այդ հանգամանքը կամ առանձին գնահատել՝ յատկացնելով դրա համար որոշ պարգև, կամ նրան կցել ընդհանուր գնահատութեանը, իբրև մի փոքրիկ յաւելում։ Վէճը վերջնականապէս չը լուծվեց, իսկ զատելը, որ տեղի ունեցաւ գնահատութեան սկզբին, մնաց անփոփոխ։ Սակայն սխալմամբ կովկասեան պանիրներից մէկը՝ այն է հիւսիսային Կովկասի դերմանական մենսիւրների ներկայացրած պանիրը մնացել էր Ռուսաստանի ներքին հանգանքների բաժնում և թէլէ ունէր պակասութիւններ, ստացաւ Նազար Գաւառի պանիր հետ միասին մեծ արժանութեալ մեղալ։ Մենսիւրները սակայն մի գերադատութիւն ունեն, որ պատրաստում են մեծ քանակութեամբ արդիւնք, տարեկան 1500 պուդ պանիր, իսկ Գաւառի մօտ 600 պուդ։

Զարմանալի է, որ այս անգամ Նիդիգերի պանիրը անկարող եղաւ այն առաջնակարգ տեղը պահել, որ նա դարձել էր վերջին տասն տարվայ ընթացքում։ Նիդիգերի գործարանը գտնվում է Ղաւաբլու կոչված տեղում և արդիւնաբերում է տարեկան 800—1000 պուդ պանիր։ Նիդիգեր ստացաւ փոքր արծաթեայ մեղալ։

Գերմանական Ալեքսանդրեւսիժ գիւղը, որ պատրաստում է տարեկան 2300 պուդ պանիր, ստացաւ նոյն պարգևը, անկարող լինելով պատ-

է, ինչ որ միշտ եղել է.— ոչ մի ապահովութիւն կեանքի, պատուի և գոյքի համար, ոչ մի արդարութիւն հարկահաւաքութեան մէջ, ոչ մի քաղաքացիական և քաղաքական ազատութիւն, ոչ մի հաւասարութիւն։ Մուտնվանները միշտ նւթարարում են իրանց իբրև նուաճող և ղեկավարող դասակարգ, բրիտանիաները միշտ բայաներ են։

«Քիւրբեքը մնացել են առաջվայ եւանդուն ձայնիմները. անհարկն է պատուաստել նրանց եւրոպական որ և է քաղաքարթութիւն, որովհետեւ Դուրանը ներքնում է նրանց մէջ ատելութիւն և արհամարհանք դէպի այդ քաղաքակրթութիւնը։ Ստեղծութիւնը դէպի «քայան» կազմում է նրա հաւատի էական դաւանանքը. նա լցվում է կրքով, տեսնելով իր թշնամու առաջարկութիւնը և իր ատելութեան ծարաւը զովանում է զգուշի գործերով։ Քիւրբը խաբում է եւրոպային և ցոյց չէ տալիս իր իսկական զգացումները, կեղծաւոր խորամանկութիւնը նրա համար նշանակում է մտքի նրբութիւն և դրա մէջ է տեսնում իր գերազանցութիւնը եւրոպացու վրա. բոլոր այդ զգացումները մարմնացած են այսօր սուլթան Աբդուլ-Համիդի մէջ. այդ պատճառով իսլամի համար նա փառաւոր, պատկառելի, սուրբ փաղիշան է։

«Քիւրբեքը չեն կարող կլանվել եւրոպական քաղաքակրթութեան մէջ. նրանք ձուլվող տարր չեն, նրանք մի մեռած ժողովուրդ են»։

Հ. Առաքելեան

բաստել առաջնակարգ պանիր, որովհետեւ նրա կաթը ժողովրդում է մի քանի տասնեակ տնեքից, ուստի նա չէ կարող կատարելապէս անարատ լինել։ Վեղբու պանրագործարանը, որ ստացաւ նոյնպէս փոքր արծաթեայ մեղալ, գտնվում է Սուկալա կոչված տեղում և պատրաստում է տարեկան 700 պուդ պանիր։ Վերջին տեղը բռնեց Խօհան Պէօշի պանիրը, որ ստացաւ բրոնզեայ մեղալ. Պէօշի գործարանը գտնվում է Իլմաղու գիւղում և տարեկան արդիւնաբերում է մօտ 900 պուդ պանիր։ Ինչ վերաբերում է Կուշենթի պանիրին, նա չենթարկվեց գնահատութեան, որովհետեւ նա ծակծրկված էր նախօրօք համը տեսնելու նպատակով, իսկ ցուցանանդէսի պայմաններով պանիր համը չը պէտք է փորձված լինէր։

Ցուցանանդէսով կային և կովկասեան տեղային պանիրները. օսի, թուշի, մինդրեկեան և չիւպանիր։ Գնահատող յանձնաժողովը գտաւ, որ օսի պանիրներից շատ լաւ է այն, որ բերված է Կորի գիւղից և պատրաստված է Կալաբով աւանդով օսի հօտում։ Կովկասեան այդ պանիրները չեն կարող ստանալ պարգևներ, որովհետեւ նրանք ուղարկված են միայն իբրև նմուշներ, մեծ մասամբ կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան կողմից։

Եւ մանրամասն չը նկարագրեցի կաթնատնտեսական ցուցանանդէսը, որովհետեւ դա կը պահանջէր շատ տեղ և ժամանակ։ Անհրաժեշտ են համարում յիշել միայն մի նոր մեքենայի մասին, որ կրում է բազիլատ օր և ակկու-մուլատ օր անուշները և որ նշանաւոր է նրանով, որ կաթից ուղիղ տալիս է իւր։ Մեր կովկասցիներին յայտնի է սեպարատոր, կամ սեպարատ մեքենան, որ դատում է սերը կաթից, իսկ նոր մեքենան աւելի առաջ է տարել գործը։ Այդ մեքենայի երեսը Արեւմուտքում մի երկու տարի է։ Նա անշուշտ ապագայ ունի, բայց այժմեան մեքենաները բաւական բարդ շինուածք ունեն, որ և կազմում է նրանց ներկայ անյարմարութիւնը։

Ա. Քալանթար

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՅՑ

Սեպտեմբերի 20-ին
Ինչպէս յայտնի է, այս ամառ Ռուսաստանում մեծ աղմուկ հանեց մի ինչ-որ անյայտ մարդու հրատարակած բրօշուրը, որ հաւատացնում է թէ այս տարվայ նոյեմբերի 13-ին աշխարհի վերջը պիտի լինի։ Այդ զեւշալութեան պատճառած իրարանցումը Բագու էլ անցաւ շնորհիւ այն հանգամանքի, որ տեղական «Բագու» լրագրում մօտ օրերս մի յօդուած է տընդարկվել նոյն բրօշուրի մասին։ Հազիւ գրագէտ ընթերցողները լրագրի յօդուածից միայն այն են հասկացել, որ նոյեմբերի 13-ին աշխարհի վերջն է։

Ինչպէս ամեն կարողացանք դիտել, Բալխա-նիի հասարակ ծառայողները հանգստութիւն չունեն, հէնց մի գլուխ տէլէֆօնով միմեանց հաղորդում են չարաբաստիկ լուրը և պատրաստվում մինչև այդ ժամանակը իրանց «վաթմա» լինել, որ գոնէ իրանց մայր հողի գրկում

ԳԻՒՂԱԿԱՆ ՀԱՔԻՄՆԵՐ
(Նամակ գաւառից)

Ժողովրդական ինքնուս և ինքնակոչ հաքիմների թիւը այնքան մեծ է դաւաններում և նրանց հարուններին, որ այն աստիճան զաղբելի, որ հարաւոր է նրանց մասին մի քանի խօսք ասել։

Գաւառներում, մանաւանդ այն տեղերում, ուր չը կան բժիշկներ, բժշկական ասպարէզը առհասարակ մնացել է այդպիսի հաքիմներին, որոնք ասիական զանազան դիւերով փորձում են իրանց արհեստը հիւանդների կաշի վրա... Հայ, թուրք, լոռի, եղիդի, ասորի՝ իբրև հաքիմներ, «սնդիկներ» և այլն՝ ամեն տեղ կան, որոնք բոլոր հիւանդութիւնների վերաբերմամբ գործ են ածում «չաքան-թոքան», «կրիայի ձու», «գաւառաւանակի», «գիւլ-էրմանի», «Եւջովուդի», «Եւջովուդի», «արուսալակի», «ղարդալ-ղարի» և այլ զանազան «հաքեր» և «մահլաւներ»։

Հաքիմներից մէկը դիցուք հիւանդանում է «չօք» (տիֆ) հիւանդութեամբ և մի կերպ առողջանալով այդ անտիկ ինքն ևս սկսում է տիֆով հիւանդներ ինքանել, որի հետևանքը լինում է այն, որ նոյն անհամապատասխան դեղերով հիւանդների մէջ առաջացնում է նաև ուրիշ, անբուժելի հիւանդութիւններ։ Մի ուրիշ հիւանդանում է «Փեւանդ-ղաւմալի» (սիֆիլիս) կոչված հիւանդութեամբ. սա էլ բազմի բերմամբ բժշկվելով մի ուրիշի՝ դաւանում է սիֆիլիս բժշկող Երբորդը օտի վրա մի փոքր վէրք

ոչնչանան Աստուծո տնօրէնութեամբ... Նոյն իսկ շատերը իրանց փողերը գանձարանից յետ են վերցնում, շատերը արձակուրդ են խնդրում կամ բոլորովին դուրս են գալիս ծառայութիւնից։ Մտածում էլ են, որ կարելի չը կայ մօր և բոլոր համար ընծաներ դնել, որովհետեւ, միևնոյն է, աշխարհի վերջն է։ Այդ գրասենեակներ իր զուսուտոված ծառաները, ինչ խօսք, իրանց իմացած յիմարութիւնը շտապել են մոյցնել նաև բանուորների «կաղարմաները» և ահա իրարանցումը կատարեալ է...

Մեղ մնում է հրապարակով հանգստացնել այդ միամիտներին և խորհուրդ տալ, որ իշուր տեղը պաշտօններից, հանգիստ դրութիւնից չը դրկեն և իրանց առանց այն էլ խախտալ դրութիւնը փչացնեն, մի քանի շաբաթ անգործ մընալով։ Վերոյիշեալ բրօշուրը ոչ մի գիտնական ճշմարտութիւն չունի իր մէջ, տպված և տարածված է շահամոլ մարդկանց ձեռքով և արդէն իր արժանի գնահատութիւնն է ստացել ռուսաց մամուլի մէջ իբրև ստոր նպատակների ծառայող մի գործ, որ ժողովրդի անդաբագած մասին այդքան վախեր է պատճառել։

Ռ. Յովհաննէսեան

ՆԱՄԱԿ ԻՄԲԱԳՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, սեպտեմբերի 21-ին
Խնդրում եմ «Մշակի» մէջ երկու խօսքիս տեղ շնորհէք։

«Մշակի» յուլիսի համարներում յայտարարվեց թէ Ռաշտի ազգային ուսումնարանի համար հարկանք է ուսուցիչ և ուսուցչուհի, և հէնց առաջին յայտարարութիւնից յետոյ ցանկացողներ եղան այդ պաշտօնները ստանձնելու, մէկը օր. Քալանթարեան, միւսը եւս՝ Ներկայանալով յիշեալ ուսումնարանի հոգաբարձու. պ. Տէր-Սարգսեանին և նրա առաջարկած պայմանները ընդունելով, վարձվեցի և խոստում ստացաւ պարտից, որ երբ ինքը կը գնայ Ռաշտ, այնտեղից հրաւեր կուղարկէ ինձ, դրա հետ և աւելացնելով, որ ես պատրաստութիւն տեսնեմ ճանապարհի համար։ Բայց հրաւերը շատ ուշացաւ. հեռագրերից, որ պատասխանեն և հանին ինձ այս անորոշ դրութիւնից, բայց էլի պատասխան չը ստացայ. իսկ օրիորդ Քալանթարեանին բարեհաճել էին պատասխանել։

Շատ տեղերից ինձ նոյն պաշտօնով հրաւիրել են, ինչպէս օրինակ, Արդարից, Դարասու-Բագարից, առաջարկեցին ինձ Սալմաստ գնալ, բայց ես ամեն տեղ մերժեցի, չը կասկածելով պ. Տէր-Սարգսեանի տուած խոստումի վրա։ Այժմ, երբ գրեթէ մի ամիս է անցել այն օրից, երբ խոստացաւ պ. Տէր-Սարգսեան, երբ բոլոր դպրոցներում դասերը սկսված են, երբ ուսուցչական պաշտօնները յիշեալ տեղերում ստանձնել են ուրիշ անձինք և դրա հետ միասին իմ կարողութիւնից բարձր ծախսեր արած եմ ճանապարհի համար՝ լուծւում եմ, որ Ռաշտի կարողի համար ուրիշ ուսուցիչ է վարձված, և դրանից յետոյ էլ դեռ ոչինչ չեն պատասխանում ինձ։ Առաջը խնդրեմ, ի՞նչ է պատասխանատուն, որ ես այս ամբողջ տարին պիտի իւղուր կորցնեմ։

Ստեփան Վարդանեանց

ՆԵՐՓԻՆ ԼՈՒՐԵՐ

Երկրագործութեան միջնատը Երմօլով այցելեց Թիֆլիսի Բօտանիկական այգին և մանրամասն

ուսնանալով և տարիներով իր անձը մաշելով հաքիմների կծու «մահլաւներով»՝ մի օր մի կերպ առողջանում է և վերաբոյժ ու «սնդիկ» (չարդված մասը կապող) պաշտօն կատարում...

Որ գաւառական ամբողջ երբեք ձեռք չէ վերցնում այդ ինքնակոչ հաքիմներից,—դա փաստ է։ Փաստ է և այն, որ գաւառական ընտանիքները իրանց հիւանդին առողջացնելու համար աւելի ուրախութեամբ յանձնում են մի որ և է ինքնուս հաքիմի 10—20 ռուբլի վճարով, քայց մասնագէտ բժիշկին մի քանի ռուբլի չեն տալիս այցելութեան համար և չեն կատարում նրա պատուէրները։ Բայց թէ որքան թըշաւառութիւնների և դժբաղդութիւնների պատճառ են դառնում մեր յիշած հաքիմները իրանց անյայտ դեղերի զանգուածներով—այդ մասին թողնում ենք դատելու ընթերցողներին։ Բաւական է յիշել միայն այն, որ այդ հաքիմները, իրանց սեփական շահերի համար, հիւանդներին բժշկելու միջոցին զանազան միջոցներ են դիմում և երկար ժամանակ հիւանդին տանջում են թէ նիւթապէս և թէ ֆիզիքապէս... Նրանք, մի խօսքով, չարեք են գիւղական խաւար ամբողջ զգալի և իբրև ժողովրդական մի այլ տղրուկ դասակարգ՝ ծծում են աղքատ ընտանիքների աւրիւնը։ Ձեռնհաս մասնագէտների սուրբ պարտականութիւնն է դրանց դէմն առնել, փակել լով նրանց գործունէութեան ասպարէզը։

Կաան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնոգովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի
կիրակի օրերէն:

ԱՌԱՌՈՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ—11—12 ժ. վերաբու-
նումներ, վնասակար (սիֆիլիս) և միզապատ. հ.
Վ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին
և նեարդային հ.

Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆԻ—11—12 ժ. կանանց
և երեխայից հիւանդ.

Ի. Ֆ. ՊՐՈՏԱՍԵՎԻԻ—12—1 ժ. աղանջի, կո-
կորդի, ընթիւ և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ—1—1 1/2 ժ. ներքին և
երեխայից հ.

Ա. Գ. ԳՈՐԻՎՈ—1 1/2—2 ժ. ներքին և միա-
սեռական հ.

ԵՐԵՎԱՆԵՐԸ

Ի. Ֆ. ՊՐՈՏԱՍԵՎԻԻ—5—6 ժ.
Ա. Ն. ՇԱՐԱՊԵՏԵԱՆԻ—6—7 ժ. նեարդային (ե-
րեխայից սիֆիլիս), վնասակար և մորթի հ.

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ—7—7 1/2 ժ.
Տ. Ի. ԲՈՒԿԵՆԿՈ—քիմիական և խոշորացու-
ցական հետազոտութիւններ և անոթ մէջի, խոխի,
արեւան և այլն:

Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի
(կենսաբանական) և օպերացիայի համար առանձին:
Օ. Տ. ԱՌԱՎՈՆԻՍԻ—պարսկական և անգլի-
անական բժշկական մարմնամար-
զութեամբ և մարզելով, դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերաբերու-
թեամբ 32—150 Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

ԲՈՒԹՅԱՆ Գ. Ս. ԳԵՐՏՖԵԼԴ

Մադրեան փողոց, № 5.

որ մասնագէտ է կաշու, միզապատ. (է-
րեխայից սիֆիլիս), վնասակար և սիֆիլիսի
հիւանդութիւնների

ՎԵՐԱԳՈՐԾԱՐԱՊ ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆԻՑ

Ընդունում է հիւանդներին ամեն օր
Առաւօտեան 9—12 ժ.
Երեկոյեան 5—8 ժ.

44—60

ԴԻԼԻՋԱՆԻ

Հայոց երկսեռ
գարնի: Համար
հարկաւոր է հայերէն լեզուով, ցենզաւոր
վարժուհի՝ ձեռագործ և առարկաներ ա-
ւանդելու համար: Ծոծիկը 800 ընթեր-
նանք և վառարկայատ: Ցանկացողը շու-
տով պիտի գիտէ: Делужане, noneчтено
Давтянчу. 4—4

ԲՈՒԹՅԱՆ Գ. Ս. ԳԵՐՏՖԵԼԴ

Ընդունում է վնասակար, ակտական, մոր-
թի և ներքին հիւանդութիւն ունեցողներին:
Առաւօտեան 9—12 ժամը
Երեկոյեան 5—7 ժամը:

Գանձակայա փողոց, տուն Մարգարովի, № 31:
(Ե. հ. չ.) 72—100

“ՎԻԵՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ”
ԱՂԷՔ. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆԻ

Գոյովնակի Պրոսպեկտի վրա, առաջին դիմապիտի հանդէպ, տուն Քաշուէթի
սուրբ Գէորգ եկեղեցու:

Սաացել ենք մեծ քանակութեամբ աշնան ալիւն և
ձմեռ ալիւն սեղանի համար:

Տղամարդկանց և Երեխաների պատրաստի
հագուստներ:

Սաացված է նոյնպէս ՔՐՈՄԵՆԵՆԻՑ ԶԻՆՍՆԵՐ.— դասաւորական,
ուսուցչական և աշակերտական—կապիկական և բէլական ստոյմարաններ:
Ունենալով մեծ քանակութեամբ մատերիներ, ընդունում ենք նաև ամեն
տեսակ պատուէրներ: Գնեք ՎԵՐՋՆԱՎԱՆՆԵՐ և անհամեմատ էման:
Վերադարձի վճարով պահանջողները, պէտք է ուղարկեն պատուէրի
1/2 մասը:

Եղարք Ե. և Մ. Միրզաբեկեանցների
ԽՈՒՄԻՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ

ԲԱԳԻՈՒՄ

Ի նկատ առնելով, որ տարէջ տարի մեր գործարանի ծխախոտի և պապիրոսի պահանջը
գնալով մեծանում է, մենք, որպէս զի դիւրութիւն լինէր տուած մեր մշտական գնողներին՝ վըճ-
անելու Քիֆիսում (Հաւաքարի կամուրջի մօտ, տուն Իսաբովի) բանալ սեփական խանութ, որ-
տեղ կարելի է միշտ ստանալ ծխախոտի և պապիրոսի ամենաբարձր տեսակները: Ենթադրւոյ ալ
պահանջի, մենք հնարաւորութիւն ունենք ամենաբարձր պապիրոսներ և ծխախոտ ծախել աւելի
էման գնեցով:

Օտարաբաղաւոր իրանց պատուէրներով դիմում են՝ Թիֆլիս, табачный магазин
Бр. Мирзабековых.

Պատուէրները կատարվում են ճշգրտեամբ և շուտ:

4—10

ԱՆԳԼԻՏԵՐԵՆ ԼԵՋՈՒ
Մ. ՄՈՒՐՏԵՎ,

հեղինակ ՔՐՈՐԹՈՒՄ, «ԿՕՋՕՐ» և ուրիշ շա-
րադրութիւններ. ամառային արձակուրդներից
յետոյ վերսկսել է իր դասերը թէ իր մօտ և
թէ տներում: Երաշխաւոր է ուղիղ արտասանու-
թեան համար և աւանդում է ռուսաց, ֆրան-
սիական և գերմանական եղանակներով: Աշա-
կերտներին և երթեկներին զիջում: Կարելի է
տեսնել ժամի 10-ից մինչև 4-ը: Մարդկային
կայա փողոց, տուն Մարտիրոսեանի: 5—5

ԹԻՓԼ. ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

վաճառվում են

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր Ի Գ

ՊԵՏՐՈՍ ԳՈՒՐԵԱՆ, Ա. Զօրանեանի . . . 50 կ.
ԲՈՒԿԱՆ, Կաղմ. Ստ. Մալիս . . . 20 »
ԿՕՆՏԱՆԻՆՈՍ, Կաղմ. Գ. Բաղդ. . . 20 »
ՊԱՍԿԱՆ, Թ. Գ. Բաղդ. . . 20 »
ԳԱԼԻԼԵՅ, Կաղմ. Հ. Առաքելեանց . . . 25 »
ՊՈՒՇԿԻՆ, Ս. Լիսիցեանի . . . 40 »
ԳԼԱՒՍՏՈՆ, Լէօ. 80 »
Իրանի Թիֆլիս, Тифлисское Общество Издания
Армянских книг. Կամ Tiflis, (Russie), Société
de la publication des livres Arméniens. 3—5

Պետերբուրգի բժշկական վարչութեան թղթ-
տուութեամբ: Մեծ արկղիկը 5 թուրքի, փոք-
րը—3 թ. և 1 թ. 50 կ.:



ՆՈՐ ՄԻՋՈՑ

մաղերը բուցցնելու և ամրացնելու համար,
ոչնչացնում է թիֆլի: Դուրս է եկել նաև
բուլբուլին նոր միջոց

ՁՈՒՒԿԱԹԸ

երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տա-
լու համար, ոչնչացնում է արեւի պատճա-
ռած սևութիւնը, մուկները, տալիս է կա-
շուին քնքշութիւն և սպիտակութիւն: Այդ
գնեքը շափաւոր են. մեծ արեւակը, արկղի-
կի մէջ, 2 թուրքի, փոքրը—1 թ. 50 կ.
Մախիւմ են թուրք պարֆիւմերական և
ղեղալիւծաւական խանութներում: Գլխա-
ւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում,
Պուշկինսկայա փողոց տ. № 15, քնակա-
րան № 12. պահեստի բաժանմունքները
գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դե-
ղատան ապրանքների վաճառման ընկերու-
թեան խանութում: Երևանեան հրապարակ
և նրա բաժանմունքում, Միքայելեան փո-
ղոց և Բաղուս. նաև Միքայելեան կամուր-
ջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատ-
ներում: 5—100

Բժշկարար Կէֆիր եւ Կոռմիս

Օ. ԿՕՐՕՆԱ

Փոյլատրված Քիֆիրի բժշկական բաժանմունքից և արժանացած երկու մէդալ-
ներէ՝ երկու ցուցահանդէսներում, ընտիր կէֆիր և կոռմիս պատրաստելու համար: Կարե-
ւի է ստանալ Օ. Կօրօնայի գործարանում, Լօրիս-Մէլիքեան փողոց, տուն Զուրաբովի և
բաժանմունքում, Միքայելեան փողոց, օֆիցէրներին տնտեսական ընկերութեան խանութ-
թին կից:
Ուսուցիչներին, սուսնողներին և անտեսական ընկ, անդամներին կը լինի զիջում:
Զիջում կունենան և այն չքաւորները, որոնք կը ներկայացնեն բժշկից առանձին զեղատոմս:
Ցանկացողներին՝ կէֆիր ու կոռմիս կարելի է տուն ուղարկել: 8—50

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԲԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Զեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան
ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, և-
բաշխաւորելով, և եղած դէպքերում լսնալն է առնում պաշտօնի առաջարկել:

ՊԱՐԱՊՈՒՆԵՐԻ ԱՌԱԿԱՆԵՐՆԵՐ

Ա) Կրկնակի խաղական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ծրուկերի, հան-
դերձ նախալին արդիւնաբերական և կերտիւնի գործարանական հաշուապահութեան:

Բ) Առևտրական թուաբանութիւն:

Գ) Առևտրական նամակագրութիւն:

Դ) Գեղարուութիւն և ամենալատ ձեռքերի ուղղել:

Պարապմունքները սկսվելու են 1899 թ.ի սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար
շարունակվելու են իւրաքանչիւր ԶՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին
գործնական պարապմունքներ:

Ցանկացողները թիւ դիմեն դրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան,
Ս Օ Լ Օ Լ Ա Կ, Սեղիւծակայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20:

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է թիֆլիսում, հեղինակի մօտ,
և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում: Գինն է 3 թ. 50 կօպէկ: Օտա-
րաբաղաւորները զիջելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պատի ծախս
վճարելու: 7—20

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-1e

ՅԻՐԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.


Կանոնաւոր և ուղղակի նաւաւացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբա-
թը մի անգամ,

Եւ հակառակ՝ Բաթումից Մարսէլ, մանրով Տրապիզոն, Սամսուն և Պոլիս: Մեկնում է Բաթում-
մից՝ չորեքշաբթի, 29 սեպտեմբերի 11 նոյեմբերի ԱՆԱՏՈՒՄ չորեքշաբթի, նաւապետ ԲԻՆԵԿԻ: Եւ
այսպէս շարունակաբար, երկու շաբաթ մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից
պակաս գնեցով:

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտիքալէի մէջ, ընդունե-
լով ապրանքներ բոլոր հիւանդային նաւահանդիսանքի համար:

Ապրանքները և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար
թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակառարներին:

ԲԱԹՈՒՄԻՄ—պ. Վիկտոր դ'Արսոն, Նաբէլէմայա: Թիֆլիսում—պ. Օ. Գ. Բարեկենդա-
նեանին, Սիմի փող. Թօլմախարուսովի և Մայսուրաձէի բարձրատարա: ԲԱԹՈՒՄ—պ. Վ. Ե. Մուրա-
ֆեաններին, Նաբերեժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27: ՆՕՎՕՐՕՍՍԻՑՍԿ—պ. Միլիտոր
Հերշենբուրգերին: (Ե. հ. չ.) 6—20



ՆԵՐԱՅԱՑՈՒՑՈՒԹԻՒՆ

Ռուսաց և արտասահմանեան ֆիր-
մաների:

ԲԻՐՈՆ ՅԱՆՁՆ Է ԱՌԵՆՈՒՄ

Կառուցանել
Ամեն տեսակ շինութիւններ, գոր-
ծարաններ և գործատներ

ԳԱՋԱ-ՇՈՂԻՒ-ԶՐԱՆՑՔՆԵՐ

Ամեն տեսակ էլէկտրօտէխնիկական
կառուցումներ և սարքեր, այսինքն
հեռագրիներ, տէլէֆօններ, լու-
սաւորութեան, տրամվայների և ոյ-
մի հաղորդելու հեռաւորութեան վրա:

ՅԻՆԱՐԱՐԱՆ-ՑԵՆԻԿԱՆ ԲԻՐՈ



Իմեներ Ն. Բ. Պասսեկի

Тифлиси, Михайловская ул. № 116.

Հասցեն հեռագրիների համար. Тифлис—

Пасеку.

ՏԵԼԵՖՈՆ № 642.



ԿԱՆԱԼԻԶԱՑԻԱ, ՎԵՆՏԻԼԱՑԻԱ
և ՏԱԲԱՑԻԱՆԵՐ

ԴՆԵԼ, ԺՈՂՈՎԵԼ և ՍԱՐՔԵԼ
ամեն տեսակ

տիւրիւններ, խողովակներ, մեքենա-
ներ և ջրհաններ:

Կ Ա Ռ Ո Ւ Ց Ա Ն Ե Լ

Ե Ր Կ Ա Թ Է Կ Ա Մ Ա Ը Ն Ե Ր
և տնակներ:

ՑԵՄԵՆՏԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ

(Ե. հ. չ.) 38—100

СЕКРЕТЪ ГЛИЦЕРО-ВАЗЕЛИНОВОЕ
КРАСОТЫ МЫЛО
А.СІУ и К. МОЛОДОСТИ
МОСКВА. 20 коп. кув.

M. 109486